

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



«Ֆարմ Ֆրիտես» ընկերության ներկայացուցիչը մեր հանրապետությունում է

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է կարտոֆիլի վերամշակման հուլանդական «Ֆարմ Ֆրիտես» ընկերության զարգացման ծրագրերի պատասխանատու Յոս դեն Բոերին:

Հանդիպման սկզբում ներկայացնելով ընկերության գործունեության հիմնական ուղղվածությունը՝ պարոն Յոս դեն Բոերը նախարարին տեղեկացրել է, որ «Ֆրանկ Սյուլլեր» ընկերության հիմնադիր, շվեյցարահայ խոշոր գործարար Վարդան Սրմաքեշի կողմից իրականացվող Շիրակի զարգացման ծրագրի շրջանակում քննարկվել է մարզում կարտոֆիլի վերամշակման արտադրության կազմակերպման հնարավորությունը: Մասնավորապես, նախատեսվում է կազմակերպել կարտոֆիլի այլուրի (ֆլեյթի) արտադրություն: այդ նպատակով կսպառվի տարեկան շուրջ 70 հազար տոննա կարտոֆիլ: Այս ծրագրով հետաքրքրված է կարտոֆիլի վերամշակման աշխարհի հինգ խոշորագույն ընկերությունների թվում դասվող հուլանդական «Ֆարմ Ֆրիտես» ընկերությունը, որը պատրաստակամություն է հայտնել համաֆինանսավորմամբ մասնակցել Հայաստանում վերամշակման գործարանի կառուցմանը:

2

Ոռոգման համակարգի վերազինման ծրագիր

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Չարգացման ֆրանսիական գործակալության պատվիրակությանը, որի կազմում էին Ասիայի վարչության փոխտնօրեն Ժան-Կլոդ Պիրը, Կովկասի և Կենտրոնական Ասիայի հարցերով տարածաշրջանային համակարգողներ Ալեքսանդրա Վասիլիադը և Գաել Ասայազը, Կովկասի հարցերով բաժնի միջազգային կամավոր Անտուան Լյուրին:

Որոշվելով հյուրերին՝ նախարարը բարձր է գնահատել Չարգացման ֆրանսիական գործակալության հետ ձևավորված համագործակցության արդյունավետ փորձը և հույս հայտնել, որ երկու բարեկամ երկրների միջև գործակցությունը նոր թափ կստանա: «Գյուղատնտեսությունը մեր երկրում գերակա ուղղություն է, վերջին տարիներին դինամիկ զարգացում է ապահովում, և սա այն ոլորտն է, որտեղ կատարված ներդրումները միանշանակ արդարացված են: 2015 թվականի տվյալներով ոլորտում արձանագրել ենք 11,7 տոկոս աճ և նոր ծրագրերի, ֆինանսական օժանդակության միջոցով հնարավորություն ունենք զգալիորեն ավելացնել ծավալները», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Այս համատեքստում կողմերը երկուստեք կարևորել են Վեդու ջրամբարի կառուցման և ոռոգման համակարգի վերազինման ծրագիրը, որի վերաբերյալ ֆինանսավորման պայմանագիրը ստորագրվել է նախօրեին: Ծրագրի շրջանակում նախարարն առանձնակի կարևորել է արդյունավետ ջրօգտագործման հարցը՝ հատկապես կաթիլային ոռոգման համակարգերի կիրառումը: Հանդիպման ընթացքում ՀՀ Կովկասի վարչության փոխտնօրեն Ժան-Կլոդ Պիրը պատրաստակամություն է հայտնել քննարկել գյուղատնտեսության ոլորտում նոր ծրագրերի ֆինանսավորման հնարավորությունները:

Ս. Կարապետյանը նշել է, որ մեր երկրում այժմ նոր թափ է ստանում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը, որի համար հիմք է ընդունվել ֆրանսիական մոդելը: Նախարարի խոսքով՝ ոլորտի հիմնական խնդիրը կապված է արժեչղանների հզորացման հետ, որը հնարավորություն կտա լուծել իրացման խնդիրները:

Որպես հետագա համագործակցության հնարավոր ուղղություն՝ նախարարը նշել է ցուցադրական համատեղ կոոպերատիվ գործարանի կառուցումը, որը կզբաղվի ֆրանսիական պանիրների արտադրությամբ, կարկտապաշտպան ցանցերի և ցրտահարությունների դեմ պայքարի նոր միջոցների կիրառումը, մատչելի պայմաններով գյուղտնիսիկայի, մասնավորապես՝ կոմբայնների տրամադրումը, գինեգործական կոոպերատիվի հիմնումը և այլն: Կողմերը քննարկել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր ևս:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Գործադիրի որոշմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը թույլատրվել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած և կազմակերպել նոր գնման ընթացակարգ:

Հաշվի առնելով ՀՀ սահմանակից երկրներում (Իրանի Իսլամական Հանրապետություն, Թուրքիայի Հանրապետություն) արձանագրված կենդանիների դաբաղ հիվանդության դեպքերը, տիրող իրավիճակը և շրջանաձվող դաբաղի վիրուսի տիպերը, ինչպես նաև, հիմք ընդունելով Ռուսաստանի Դաշնության «Կենդանիների առողջության համառուսական գիտահետազոտական ինստիտուտ» Դաշնային պետական բյուջետային հաստատության կողմից, Հայաստանի Հանրապետությունում արձանագրված դաբաղ հիվանդության տեսակը հաստատելու, և գենետիկական ուղղվածությունը (հակաձնային ազգակցական կապը) պարզելու վերաբերյալ ստացված գրությունը՝ ՀՀ-ում գյուղատնտեսական կենդանիների դաբաղ հիվանդության դեմ արդյունավետ կանխարգելիչ պատվաստումներ իրականացնելու նպատակով, անհրաժեշտ է 2016 թ. ընթացքում, «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակում, վերոնշյալ հայտարարված մրցույթով նախատեսված համապատասխան տիպերի հակադաբաղային պատվաստանյութի փոխարեն, ձեռք բերել մեկ այլ շիճուկաբանական տիպերով արտադրված պատվաստանյութ:

Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն՝ գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացման հարցերի շուրջ: Քննարկվել են Հայաստանում գյուղացիական կոոպերատիվների կայացմանը և ամրապնդմանը, պետական աջակցության մեխանիզմների կատարելագործմանն առնչվող հարցեր: Արժանապատիվ են «Գյուղացիական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի կիրարկմանը և օրենքից բխող ծրագրերի իրականացմանը վերաբերող հարցեր: Անդրադարձ է եղել նաև գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման և ոլորտի հետագա զարգացման հեռանկարներին, ներկայացվել են մի շարք առաջարկություններ:

Վարչապետը, ամփոփելով քննարկումը, նշել է, որ կառավարությունը պատրաստ է աջակցել գյուղացիական կոոպերատիվների կայացմանը և կարևորելով այդ գործընթացում բոլոր շահագրգիռ մասնակիցների ջանքերի համատեղումը՝ առաջարկել է ներկայացնել «Գյուղացիական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքից բխող գործնական քայլերի և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ:

Կառավարությունը հաստատել է ՀՀ հողօգտագործողներին 2016 թ. գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը: Մարզպետարաններից ստացված տեղեկատվության համաձայն՝ դիզելային վառելանյութի նկատմամբ 2016 թ. գյուղատնտեսական աշխատանքների համար պահանջարկը կազմում 6000000 լիտր, որը հողօգտագործողներին կտրամադրվի 1 լիտրը՝ 280 դրամով: Գործադիրը հաստատել է նաև հողօգտագործողներին 2016 թ. գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը: Մարզպետարաններից ստացված տեղեկատվության համաձայն՝ ընթացիկ տարվա գյուղատնտեսական աշխատանքների համար պահանջարկը կազմում է 34594,3 տոննա ազոտական, 1079 տոննա ֆոսֆորական և 1574,55 տոննա կալիումական պա-

Համատեղ աշխատանքով հաղթահարում են դժվարությունները	Էջ 4
Նայկական լավաշը կճաշակեն աշխարհի բազմաթիվ երկրներում	Էջ 5
Մասնագետի խորհուրդը	Էջ 6

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

«Ֆարմ ֆրիտես» ընկերության ներկայացուցիչը մեր հանրապետությունում է

«Կարտոֆիլի վերամշակմանն ուղղված ծրագրի իրականացումը Հայաստանի համար շատ կարևոր է: Մեր երկրում տարեկան արտադրվում է շուրջ 750 հազար տոննա կարտոֆիլ: այս առումով մենք ինքնաբավ ենք: կարողանում ենք ոչ միայն ներքին պահանջարկն ամբողջությամբ բավարարել, այլև՝ արտահանել: Կարտոֆիլի վերամշակման կազմակերպումը հնարավորություն կընձեռնի հաջողությամբ լուծել դրա պահպանման և հետագա օգտագործման խնդիրը», - նշել է իր խոսքում նախարար Սերգո Կարապետյանը:

Ընդգծելով, որ Հայաստանի մարզերի՝ հատկապես Շիրակի և Գեղարքունիքի բնակչության պայմանները չափազանց նպաստավոր են կարտոֆիլի արտադրության համար՝ նախարարը համոզմունք է հայտնել, որ մեր երկրում կարտոֆիլի այլուրի արտադրության կազմակերպումը կլինի ոչ միայն արդյունավետ, այլև կնպաստի կարտոֆիլի արտադրության ծավալների ավելացմանը: Հանդիպման ընթացքում հյուրը տեղեկացրել է, որ առաջիկայում պատրաստվում է այցելել Շիրակի մարզ՝ տեղում արտադրության կազմակերպման համար պայմաններին ծանոթանալու նպատակով: Նախարարն իր կողմից պատրաստակամություն է հայտնել հնարավորին աջակցել ծրագրի իրականացման ընթացքում, այդ թվում՝ խորհրդատվական ծառայությունների մատուցման, նաև գյուղագիական տնտեսությունների հետ համագործակցության հարցում:

Համագործակցությունը կշարունակվի զարգանալ և ընդլայնվել

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) պատվիրակությանը, որի կազմում էին Սերժավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի և Եվրոպայի բաժնի տնօրեն Խալիդա Բուզարը, ԳՉՄՀ Հայաստանի ծրագրերի ղեկավար Պատրիկ Հերլանտը և այլք:

Պատվիրակությունը Հայաստան է ժամանել Երևանում «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրի» մեկնարկի կապակցությամբ: «Հայաստանում իր երկարամյա գործունեության ընթացքում IFAD-ն իրականացրել է մի շարք կարևոր ծրագրեր, որոնք շատ արդյունավետ ընթացք են ունեցել: Համոզված եմ, որ մեկնարկող ծրագիրը նույնպես հաջող ընթացք կունենա և կնպաստի մեր երկրում գյուղատնտեսության ոլորտի հետագա զարգացմանը», - ողջունելով հյուրերին՝ նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:

Այնուհետև նախարարը համառոտ ներկայացրել է ոլորտի ներկա վիճակը, մատնանշել առաջնահերթություններն ու գերակա խնդիրները: Այս համատեքստում նախարարը մասնավորապես, կարևորել է պտուղ-բանջարեղենի, մսի և կաթի վերամշակման արտադրամասերի, սառնարանային տնտեսությունների, չորանոցների կառուցման, ինչպես նաև գյուղմթերքի շուկայահասման հարցերը:

Նախարարը ընդգծել է նաև օրգանական գյուղատնտեսության զարգացման, ոռոգման համակարգում նորագույն տեխնոլոգիաների ներդրման, նոր ջրամբարների կառուցման, գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման անհրաժեշտությունը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հիմնադրամը յուրաքանչյուր երեք տարին մեկ քննարկում է տարբեր պետություններում ծրագրի իրականացնելու հնարավորությունը՝ պատվիրակության ղեկավար Խալիդա Բուզարն իր հերթին առաջարկել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը մշակել գյուղատնտեսության զարգացման նոր ծրագրի նախագիծ, որը սահմանված կարգով կհաստատվի ԳՉՄՀ Խորհրդի կողմից 2017 թվականին: Տրված Բուզարը նաև հավելել է, որ նշված ծրագրի մշակմանն աջակցելու նպատակով, Հայաստան կգործուղվի մասնագետների փորձագիտական խումբ:

Զրույցի ընթացքում կողմերը քննարկել են երկկողմ հետաքրքրություններ կայացնող մի շարք այլ հարցեր: Հանդիպման ավարտին նախարար Սերգո Կարապետյանը հույս է հայտնել, որ Հիմնադրամի հետ հայկական կողմի համագործակցությունը կշարունակի զարգանալ և ընդլայնվել:

ԾՐԱԳԻՐ

Իրականացված ծրագրերի հաջող փորձ

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն ընդունել է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) Սերժավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի և Եվրոպայի բաժնի տնօրեն Խալիդա Բուզարին: Վարչապետը բարձր է գնահատել IFAD-ի հետ ծավալված շուրջ 20-ամյա համագործակցությունը, որի շրջանակում իրականացվել են Հայաստանի գյուղական տարածքների տնտեսական զարգացմանն ուղղված 7 խոշոր ծրագրեր:



Կառավարության ղեկավարը կարևորել է համատեղ ծրագրերի շարունակական իրականացումը, որոնք նպաստում են գյուղական տարածքներում կայուն գյուղատնտեսության ներդրմանը, ինչը կարևոր է բնապահպանական և սոցիալ-տնտեսական տեսանկյունից: Հովիկ Աբրահամյանը ողջունել է «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» նոր համատեղ ծրագիրը, որի պաշտոնական մեկնարկն արդեն տրվել է:

IFAD-ի տարածաշրջանային տնօրենը ևս արդյունավետ է գնահատել երկկողմ երկարամյա համագործակցությունը՝ շեշտելով, որ IFAD-ի համար Հայաստանը ճանաչելի է որպես նորարարական և հաջողված ծրագրերի փորձ ունեցող երկիր: Այս առումով Խալիդա Բուզարը գոհունակություն է հայտնել Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Չարգացման Հիմնադրամի (FREDA) գործունեության կապակցությամբ և նշել, որ մեր երկրում իրականացված ծրագրերի հաջող փորձն օրինակելի և օգտակար կլինի IFAD-ի մյուս գործընկեր երկրների համար:

Զրուցակիցները, անդրադառնալով համագործակցության հետագա զարգացմանը, քննարկել են համատեղ հաջող ծրագրի վերաբերող մանրամասներ: Վարչապետը, մասնավորապես՝ կարևորել է դրանում ՀՀ կառավարության գործունեության առաջնահերթությունների արտացոլումը, ինչպես նաև ծրագրում ՀՀ բոլոր մարզերի ընդգրկումը, ինչը ևս մեկ էական քայլ կլինի Հայաստանի տարածքային համաչափ զարգացման ուղղությամբ: Տրված Բուզարը ողջունել է վարչապետ Աբրահամյանի առաջարկությունները՝ վստահեցնելով, որ համատեղ հաջող ծրագիրը կմշակվի ՀՀ կառավարության գերակա ուղղությունների և ՀՀ բոլոր մարզերի ներգրավման ապահովելու սկզբունքի հիման վրա: Խալիդա Բուզարը նշել է, որ IFAD-ը կարևորում է Հայաստանի հետ շարունակական համագործակցությունը և նոր ծրագրերի նախաձեռնումը: Հավաստիացնելով, որ կառավարությունը հետևողական է ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու հարցում՝ Հովիկ Աբրահամյանը համոզմունք է հայտնել, որ IFAD-ի հետ համագործակցությունը կշարունակի զարգանալ ու ամրապնդվել:

ԽՈՐՀՐԳԱՎՅՈՒԹՅՈՒՆ

Նախորդ տարվա աշխատանքների ամփոփում և 2016 թ. ծրագրերի քննարկում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հրավիրել էր աշխատանքային խորհրդակցություն՝ 2016 թվականին նախարարության առջև դրված գերակա խնդիրներն ու առաջնահերթ ծրագրերը քննարկելու նպատակով:

Խորհրդակցությանը մասնակցում էին նախարարի տեղակալները, նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև նախարարության ենթակայության մարմինների և կազմակերպությունների ղեկավարները:

«Մենք նախորդ տարին ամփոփեցինք բավականին լավ ցուցանիշներով:

11 ամսվա արդյունքներով ունենք 11,6 տոկոս աճ գյուղատնտեսության ոլորտում, և այժմ պետք է բոլոր ջանքերը մոբիլիզացնենք աճի տեմպերը պահպանելու, ոլորտում առկա ներքին ներուժը լիարժեք օգտագործելու, թերացումներն ու խնդիրները լուծելու ուղղությամբ», - նշել է նախարար Կարապետյանը:

Այս համատեքստում նախարարը հորդորել է մեծ ուշադրություն դարձնել խնայողական ռեժիմների կիրառման, իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացման, դրանց կատարողականների նկատմամբ մշտադիտարկումների անցկացման հարցերին:

Ոլորտում առկա ներուժն առավել արդյունավետ օգտագործելու և տնտեսական աճ ապահովելու առումով, նախարարն ընդգծել է նաև հանրապետությունում չմշակվող հողերի ծավալների կրճատման, արտադրության

ավելացման խնդիրները՝ առանձնացնելով բանջարաբուստանային մշակաբույսերի, հատկապես լոլիկի և կարտոֆիլի ցանքատարածությունների ավելացման կարևորությունը:

Այս առումով նախարարը հանձնարարել է պատասխանատուներին՝ ամենօրյա աշխատանքներ իրականացնել մարզպետարանների և գյուղացիական տնտեսությունների հետ՝ այս հարցում շեշտադրելով հատկապես խորհրդատվական համակարգի ակտիվ դերակատարումը:

Նախարարը կարևորել է նաև աշխատանքների ինտենսիվացումը բուսաբուծության ոլորտում նորարարական տեխնոլոգիաների, այդ թվում՝ կաթիլային ոռոգման համակարգերի, հակակարկտային ցանցերի ներդրման, ինտենսիվ պտղատու այգիների հիմնման, ջերմոցային տնտեսությունների ավելացման գործում:

Անդրադառնալով անասնապահության

հույսային ոլորտում իրականացվելիք ծրագրերին՝ Սերգո Կարապետյանն առանձնացրել է արհեստական սերմնավորման, տոհմային երկնյաների ներկրման, սպանդանոցների շահագործման և «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (CARMAC 2) ծրագրի ներքո նախատեսված աշխատանքներին առնչվող մի շարք խնդիրներ:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են նաև արտահանումների ավելացման, կոոպերացիայի զարգացման, մթերումների դիմաց վճարումների կատարման, վերամշակողների և գյուղացիների միջև պայմանագրային հարաբերությունների հաստատման և այլ հարցեր: Պատասխանատուներին տրվել են առանձին հանձնարարականներ և ցուցումներ՝ իրենց համակարգման ներքո գտնվող ոլորտների վերաբերյալ:

ՄՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄՆՆԴԻ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ

Մարդու առողջությունը մեծապես կապված է շրջապատող միջավայրի գործոններից ու ընդունված սննդի որակից: Շրջապատող միջավայրի աղտոտումը կարող է պայմանավորված լինել զանազան գործոններով. դրանցից են՝ ռադիոակտիվ աղտոտումը, քիմիական աղտոտումը տարբեր նյութերով (ածխաթթու գազ, ծծմբի անհիդրիդ, ծծմբաջրածին, ազոտի օքսիդներ, ֆտորի և քլորի տարբեր քիմիական միացություններ, կանցեռոզեն նութեր և այլն), մթնոլորտի աղտոտումը աերոզոլներով, փոշիներով, ծանր մետաղների միացություններով և այլ բազմաթիվ նյութերով, որոնք իրենց զգալի լուծման ունեն մարդու առողջական վիճակի վատթարացման գործում: Սակայն բոլորից առավել մարդու առողջության վրա ազդող ամենվտանգավոր գործոնները: սննդի և ջրի միջոցով մարդու օրգանիզմը ներմուծվող թույներն ու վնասակար նյութերն են: Սնունդը օրգանիզմի համար ծառայում է էներգիայի, կենսաբանական ակտիվ նյութերի, տեղեկատվության աղբյուր (քիմիական առումով) և հումք՝ վերջինիս կառուցման, բազմացման և պաշտպանության համար:

Մարդու օրգանիզմը շրջակա միջավայրի հետ մշտապես գտնվում է նյութային ու էներգետիկ փոխանակման մեջ և դրա շնորհիվ այն ինքնակառավարվող և ինքնակարգավորվող մի բարդ համակարգ է: Ահա այդ համակարգում որևէ վնասակար նյութ կամ գործոնի մուտքը հանգեցնում է այդ օրգանիզմի կողմից իրականացվող բազմաթիվ բարդ ու իրար լրացնող ֆիզիոլոգիական պրոցեսների և քիմիական ռեակցիաների: Այս բոլորը կատարվում է օրգանիզմում ներդրված գենետիկական ծրագրի շնորհիվ, որն էլ կանխորոշել է դրա հնարավոր, պոտենցիալ ձևափոխումն ու հարմարվողականությունը սպառնացող վտանգի դեպքում: Հետևաբար, սննդային ավտանգությունը մարդու համար ամենակարևոր նախապայմանն է, որն ապահովում է մարդու բնականոն կենսագործունեությունը, հարմարվողականությունը տարբեր բնակլիմայական պայմաններին, աշխատանքային հաջող գործունեությունն ու առողջ բազմացումը: Ներկայումս գոյություն ունեցող սննդային հսկայական բազմազանության մեջ կա նաև նման հսկայական վնասակար նյութերի ու հավելումների առկայություն, որը շատ հաճախ հանգեցնում է օրգանիզմի ժամանակակից շուտ ծերացմանը, այս կամ այն օրգանի ախտահարմանը, աշխատանքային գործունեության մասնակի կամ լրիվ կորստին և որ ամենավտանգավորն է՝ նաև նորմալ սերնդի գոյությանը: Սա պայմանավորված է սննդի մեջ ներմուծվող բազմաթիվ հավելումներով, քիմիական ակտիվ նյութերով, ախորժաբեր նյութերի լցումներով, սննդի արագ փչացումը կանխող հակամիկրոբային նյութերով և այլն: Ահա այս պատճառով, գիտնականների և սննդի անվտանգության մասնագետների կողմից առաջարկվել և ընդունվել են միջազգային նորմեր՝ սննդի որակի և անվտանգության վերաբերյալ, որոնք ստացել են Ստանդարտներ անվանումը: Տվյալ դեպքում սննդի ստանդարտացման աշխատանքներն իրականացնում է Ստանդարտացման Միջազգային կազմակերպության համաժողովը (ISO/TK 34), որն էլ մշակում է այդ ստանդարտները (ներկայումս դրանց թիվը 540-ից ավելի է): Դրանց հիմնական դերն է մշակել զանազան սննդամթերքների խմբերի անալիզի մեթոդներ՝ բացահայտելու համար սննդամթերքների

մեջ զանազան վնասակար նյութերի առկայությունը և դրանց վնասակարության շեմը: Սննդի անվտանգության հարցը մարդկությանը հետաքրքրել ու անհանգստացրել է դեռևս մի քանի հազարամյակ առաջ, հիմնականում թագավորների ու պալատական մարդկանց համար, սակայն այն սահմանափակվում էր միայն ժամանակի ամենաուժեղ թույների ուսումնասիրմամբ՝ թունավորելուց խուսափելու նպատակով: Ներկայումս սննդի արտադրության գործընթացում որպես հավելումներ, հակաբիոտիկներ, մանրէասպան նյութեր և հականեխիզներ կիրառվում են մի ամբողջ խումբ քիմիական ու կենսաբանական պատրաստուկներ, որոնք քիչ թե շատ ազդում են մարդկանց առողջության վրա, հանգեցնում օրգանիզմի բարդ, ինքնակառավարվող-ինքնակարգավորվող համակարգի որևէ համակարգի փոփոխմանը, իսկ երբեմն նաև՝ վնասմանը: Սննդի մեջ ավելացվող բոլոր նյութերը ներկայացվում են ինչպես արտադրությունում ավելացվող, այնպես էլ՝ արտադրության պրոցեսի սանիտարահիգիենիկ կանոնների չպահպանման հետևանքով, զանազան պատճառներով լցվող տարատեսակ վտանգավոր նյութերի տեսքով: Դրանք բոլորը, եթե փորձենք տարանջատել ու տեսակավորել, կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Չանազան թունավոր սննդատարրեր առկայություն (սնդիկ, կապար, երկաթ, կադմիում, ցինկ, անագ): Սրանց մուտքը հնարավոր է՝ ինչպես հումքի (հողից, թունաքիմիկատներից, մթնոլորտային օդից՝ սնդիկի գոլորշիներ), այնպես էլ պահպանման ընթացքում, եթե պահեստում կիրառվում են թունաքիմիկատներ (հիմնականում՝ հականեխիզ, հակամիկրոբային) կամ սննդամթերքը պահպանվում է անսխալաբեր պարաներում:
2. Հակաբիոտիկներ. դրանք կարող են սննդի մեջ ընկնել ինչպես հումքից (հատկապես կենդանական ծագման հումքից, երբ կենդանիներին տալիս են հակաբիոտիկներ՝ հիվանդություններից պաշտպանելու համար), այնպես էլ առանձին դեպքերում ներմուծվում է վերամշակվող սննդի մեջ՝ նեխման պրոցեսները կանխելու նպատակով:
3. Միկոտոքսիններ. սրանք բորբոսասկերի (հիմնականում Aspergillus, Fusarium և Penicillium) գործունեության արդյունք են, որոնց գլխավոր աղբյուրը հողն է, այստեղից միտոտոքսիններն անցնելով սննդի մեջ, հետագայում մուտք են գործում մարդու օրգանիզմ, առաջացնում են միկոտոքսիկոզներ, որոնք ունեն կանցեռոզեն, նեյրոտոքս, ալերգեն և այլ վնասակար ազդեցություններ:
4. Մանրէները. սրանք սննդի մեջ մուտք են գործում հողից կամ արտադրության պրոցեսում սանիտարահիգիենիկ պայմանների ոչ ճիշտ պահպանման հետևանքով: Հիմնական վտանգավոր մանրէների թվին են պատկանում աղիքային ցուպիկը (Escherichia coli), սալմոնելները, ստաֆիլոկոկերը և սպորաառաջացող աերոբ բակտերիաները (Bacillus cereus):
5. Սննդային հավելումներ՝

*քիմիական կամ բնական, մաքուր վիճակում, որպես սնունդ չօգտագործվող նյութեր, որոնք ավելացվում են հումքին՝ որպես լրացուցիչ բաղադրամաս և



ուղղակի կամ անուղղակի ազդում են սննդի որակական բնութագրերի վրա, *բնական կամ սինթետիկ նյութեր, որոնք կանխամտածված մտցվում են հումքի մեջ՝ դրա պահպանման ժամկետը երկարացնելու համար, *որպես սնունդ չօգտագործվող ու սննդի մեջ ավելացվող հավելում, որը երբեմն ունի սննդային արժեք: 6. Հորմոնալ պատրաստուկներ: Այս վնասակար նյութերը սննդի մեջ մուտք են գործում հիմնականում կենդանական ծագման հումքից, որին ժամանակին կերակրում են հորմոնալ կերերով՝ արագ քաշաճ ապահովելու համար: Այս պատրաստուկների մեծ մասն օժտված է կանցեռոզեն ազդեցությամբ, որոնք վաղ թե ուշ հանգեցնում են մարդու օրգանիզմի բնականոն կենսագործունեության խաթարները: 7. Գենետիկական փոփոխված օրգանիզմների հումքի հիման վրա ստացված սննդանյութեր: Որոշ երկրներում այս տեսակի սննդամթերքներն արգելված են կամ պարտադիր մակնշման պետք է ենթարկվեն:

Սննդային հավելումները, եթե տեսակավորելու լինենք, ըստ բնույթի, լինում են հակաօքսիդանտներ, գույների պահպանմանը նպաստող նյութեր, ներկանյութեր, կայունացուցիչներ, քաղցրացուցիչներ, թանձրացուցիչներ, խտարարներ, դոնորազոյացուցիչներ, էմուլսարարներ, համի և հոտի ուժեղարարներ, պահածոյացնողներ (կոնսերվանտներ) և այլն: Ներկայումս սննդի արդյունաբերության մեջ կիրառվում են բազմաթիվ և բազմապիսի հավելումներ, հականեխիզներ, ախտահանիչներ և այլն, որոնք այս կամ այն կերպ բացասաբար են ազդում առողջության վրա: Դրա համար, առավել վտանգավոր հավելումները կամ գենետիկական փոփոխված սննդամթերքները մակնշված են պահածոների տուփերի վրա: Խորհուրդ է տրվում ցանկացած պահածոյի կամ սննդամթերքի գնումից առաջ ծանոթանալ դրա տուփի վրա գրված տեղեկությանը՝ խուսափելու համար հետագա առողջական խնդիրներից: Խոսքը առաջին հերթին ալերգիկ և շաքարախտով հիվանդ մարդկանց մասին է. վնասակար նյութի նույնիսկ չնչին քանակները կարող են առաջացնել անցանկալի հետևանքներ:

Գենիկ Մովսիսյան

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Նախատեսվող աշխատանքները դրական ազդեցություն կունենան ոլորտում

ՀՀ Արմավիրի մարզպետարանում Գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն, կազմակերպվել էր «Հաստատանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2015-2025 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2015-2025 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» հիմնադրության փաստաթղթի նախագծի հանրային քննարկում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:

Քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, փոխարզպետ Դավիթ Սամսոնյանը, ՀՀ գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների և մարզպետարանի աշխատակազմի ոլորտը ներկայացնող պատասխանատուներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ԳՆ գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության պետ Հրաչյա Ծպնեցյանը ներկայացրել է ծրագրային փաստաթղթի նախագծի հիմնական դրույթները, խոսել նախատեսվող աշխատանքների մասին, ապա պարզաբանել հարցադրումները և պատասխանել ինչեզմիջ հարցերին: Հնչել են նաև առաջարկություններ, որոնք, բանախոսի հավաստմամբ, տեղ կգտնեն հիմնական փաստաթղթում: Առաջարկությամբ հանդես եկավ մարզպետ Աշոտ Ղահրամանյանը՝ նշելով, որ գյուղի և գյուղատնտեսության 2015-2025 թվականների կայուն զարգացման ռազմավարության նախագծում անպայման պետք է հաշվի առնել մարզերի առանձնահատկությունները և հատկապես մեծ ուշադրություն դարձնել գյուղմթերքի իրացման գործընթացին առնչվող հարցերին:

Ամփոփելով քննարկումը՝ նա հույս է հայտնել, որ ծրագրի իրականացումը դրական ազդեցություն կունենա ոլորտի զարգացման և շրջակա միջավայրի վրա:

www.armavir.mtaes.am

ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ

«Հայաստանի մանր կենդանիների անասնաբույժների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 2014 թվականին...

զգալիորեն նպաստում է Կրաստանում անասնաբուժության զարգացմանը: Վահան Խաչատրյանը նշում է, որ Հայաստանում նման ասոցիացիայի ձևավորման գործընթացին աջակցել են վրաց գործընկերները...



միջոց եղել է արտերկրում: «Անասնաբուժական գիտությունն անընդհատ զարգանում է արտերկրում, ուստի Հայաստանը նույնպես պետք է կարողանա ընթանալ համաքայլ»,- ասում է ասոցիացիայի նախագահը...

սրտաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ Անդրեյ Կամոլովին: Հաջորդ գիտաժողովները կայացան նախորդ տարի, Հայաստանում՝ կենդանական կերեր ներկրող Ֆրանսիական «Ռոյալ Կանին» ընկերության հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ...

կան ասոցիացիայի անդամ: Անցած տարեվերջին մասնագիտական վերապատրաստման նպատակով, Հայաստանից երկու անասնաբույժ է մեկնել Լեհաստան: Նրանք ծանոթացել են վիրահատությունների աշխարհում գոյություն ունեցող նորագույն եղանակներին, մասնակցել փորձնական աշխատանքներին: Ծախսերի գերակշռող մասը հոգացել է լեհական կողմը: Վահան Խաչատրյանի տեղեկացմամբ, ընթացիկ տարում նա երկու մասնագետներ, Անգլիական դպրոցի հրավերով, կմեկնեն վերապատրաստման: Նրանք, ելնելով իրենց նախասիրություններից, կծանոթանան անասնաբուժության ոլորտի նորություններին: «Այսպիսով, փորձում ենք մոտենալ միջազգային չափորոշիչներին: Կարևորն այն է, որ կա նպատակակետ, որին ձգտում ենք հասնել»,- իր խոսքը եզրափակում է ասոցիացիայի նախագահը: Վերջին տարիներին մանր կենդանիների անասնաբուժության ոլորտում նկատելի են դրական տեղաշարժերը, որին անշուշտ իր գործունեությամբ է արտաքին կապերի խորացման արդյունքում, նպաստում է նաև «Հայաստանի մանր կենդանիների անասնաբույժների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը:

Նելլի Սահակյան

ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Վերջերս Վայոց ձորի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի տնօրեն Արմեն Եսայանն ընդունել է «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Նարինե Կարապետյանին: Վերջինս ներկայացրել է 2014 թ-ի սեպտեմբեր ամսից մեկնարկած Շվեյցարիայի Չարգացման և Համագործակցության գործակալության կողմից ֆինանսավորվող և ՌԶՀ 34-ի կողմից իրականացվող «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի նպատակը: Այն է՝ նպաստել Վայոց ձորի և Սյունիքի մարզերի թիրախային համայնքներում անասնապահության ոլորտի զարգացմանը և բնակչության եկամուտների աճին:

կերեն նոր գիտելիքներ կենդանիների կաթնատվության և արտադրողականության բարձրացման, կերաբաժինների կազմման, նոր տեխնոլոգիաների և սարքավորումների, ինչպես նաև՝ կաթի, մսի շուկա մուտք գործելու վերաբերյալ: ԳԱՄԿ-ի տնօրեն Ա. Եսայանը հավանության արժանացնելով վերոնշյալ ծրագիրը՝ նշել է. «ԳԱՄԿ-ը պատրաստակամ է համագործակցելու հարցում, լիահույս ենք, որ ծրագրի անցկացման արդյունքում կավելանա անասնապահության կազմակերպության և ֆերմերներն ավելի իրազեկված կլինեն անասնապահության ոլորտին առնչվող բոլոր հարցերին և նրբություններին»:

Հանդիպման ավարտին ՌԶՀ 34-ի և Վայոց ձորի ԳԱՄԿ-ի միջև ստորագրվեց երկուստեք հուշագիր, որտեղ նշվում է, որ ԳԱՄԿ-ը Ծրագրի արդյունավետությունն ապահովելու համար հաստատում է իր պատրաստակամությունը՝ համագործակցության շրջանակներում ապահովել ծրագրային գործողությունների իրականացումը և լուսաբանումը, ինչպես նաև տեղեկատվության տարածումը Վայոց ձորի մարզի ֆերմերային տնտեսությունների շրջանում: Տեղեկացնենք, որ «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագիրը կընթանա մինչև 2020 թ.-ի օգոստոս ամիսը:

Վայոց ձորի ԳԱՄԿ

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ ԵՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տավուշի մարզի «Կիրանց համայնքի արոտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվը, որը բաղկացած է 45 անդամից, ձևավորվել է 2012 թ.-ին և անմիջապես համալրվել է գյուղատնտեսական անհրաժեշտ տեխնիկայով: Ներկայումս ունեն 2 տրակտոր՝ 4 գյուղագործիքներով, և խոտհավաքի սարքավորումներ:

նացվում կոոպերատիվում ընդգրկված սոցիալապես անապահով ֆերմերները: Նրա կարծիքով՝ կոոպերատիվի ստեղծման արդյունքում, զգալիորեն ավելացել է անասնապահությանը, ինչը պայմանավորված է նաև շուկայում մսի և կաթի իրացման գներով: «Բարձր և կայուն գների պայմաններում գյուղում անասնապահությանը ել ավելի կավելանա, քանի որ կմեծանա նաև գյուղացու շահագրգռվածությունը», - եզրահանգում է Անդրանիկ Նազարյանը: Կոոպերատիվի նախագահի գնահատմամբ, փոքր տնտեսությունների միավորման արդյունքում, դրական տեղաշարժերն առկա են: Ձեռք բերված տեխնիկան հնարավորություն է ընձեռում ժամանակին, օպերատիվ կերպով, կազմակերպել գյուղատնտեսական աշխատանքները: Կարևորվում է նաև վառելիքի և ժամանակի խնայողությունը:

«Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» միջոցներով հեռագնա արտավայրերում տեղադրվել են երկու խմոցներ, առաջիկայում գյուղում շահագործման կհանձնվի ևս մեկը: Հիմնանորոգման են ենթարկվել անմխիթար վիճակում գտնվող սարամիջյան ճանապարհները: Պրն. Նազարյանը կարևորում է նաև առաջիկա ծրագրերը, որոնց շրջանակում նախատեսվում



է հեռագնա արտավայրերում կառուցել կաթի վերամշակման արտադրամաս: Համատեղ աշխատանքի սկզբունքներին ծանոթացնելու համար գյուղում կազմակերպվել են նաև ուսուցողական դասընթացներ, որոնց արդյունքում հստակեցվել են կոոպերատիվի մասին մարդկանց պատկերացումները: «Գյուղացիները գոհ են արդյունքից, քանի որ տարեցտարի տեսնում են համատեղ աշխատանքի պտուղները: Ավելի քան 400 բնակիչ ունեցող Կիրանցի համար կոոպերացիան միայն բարիքներ է բերել», - հավելում է կոոպերատիվի նախագահը: Անասնապահության ավելացմանը զուգընթաց, ավելի արդյունավետ են օգտագործվում 1080 հա

հեռագնա արտավայրերը, որոնց բարելավման ողողությամբ ընթացիկ տարում նախատեսվում է իրականացնել լայնածավալ աշխատանքներ: Խմոցների տեղադրման արդյունքում, նկատելիորեն բարձրացել է կենդանիների մթերատվությունը:

Գյուղապետ Հմայակ Նազարյանը, ով նույնպես կոոպերատիվի անդամ է, նշեց, որ կոոպերացիան անապահով կիթանի երկրում գյուղատնտեսության զարգացմանը, ակնկալիքներն ու սպասելիքները մեծ են: «Չարգացման առաջին քայլերն արդեն արվել են, և առկա են դրական տեղաշարժեր: Համայնքը սահմանամերձ է, և գյուղատնտեսական նշանակության հողատարածքների մի մասը գտնվում են վտանգավոր գոտում, ինչը խոչընդոտում է աշխատանքների լիարժեք կազմակերպմանը: Սակայն ձեռք բերված նոր տեխնիկան հնարավորություն ընդձեռեց համատեղ կազմակերպել գյուղատնտեսական աշխատանքները», - պատմում է գյուղապետը: Նրա հաշվարկներով, զգալիորեն իջել է նաև արտադրվող գյուղմթերքի ինքնարժեքը, ավելացել են գյուղացիների եկամուտները:

Ընթացիկ տարում կլուծվի նաև գյուղատնտեսական հողատարածքների ոռոգման խնդիրը: Ուրախալի է նաև այն, որ սահմանամերձ Կիրանց գյուղում արձանագրվել է բնակչության թվի աճ: «Գյուղացին շահագրգռված է ավելի շատ աշխատել և առավել բարեկեցիկ կյանքով ապրել», - հավելում է գյուղապետը:

Ն. Ս.

Արտադրություն

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԱՎԱՇԻ ՀԱՄՆ ՈՒ ԲՈՒՅՐԸ ԿՃԱՇԱԿԵՆ ԱՇԽԱՐՀԻ ԲԱԶՄԱԹԻՎ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ուզումավարական նշանակություն ունեցող հացի արտադրությունը պահանջում է պելեական աշակցություն՝ ապահովելու հացի քանակը, գինը, ինչպես նաև՝ համայն ու որակական հատկանիշները: ՀՀ-ում հացի արտադրության շուկայում «Սևանի հացի գործարանը» առաջարարն է, խոշոր հարկատուներից մեկը և ունի 76 տարվա պատմություն: 1997 թ.-ից գործարանը փակ բաժնետիրական ընկերություն է: Բազմաթիվ պարզևեների արժանացած «Սևանի հացի գործարանը» 2015թ. Արևմտահայաստանի ցուցահանդեսում արժանացավ «Սևանի մեդալի»: Շուրջ 33 տարուց ավելի է, որ գործարանի լայնածավալ աշխատանքներն է ղեկավարում Աշուր Ավերիսյանը, ով վերապարասարվել է Մոսկվայում և ձեռք է բերել հացագիտական աշխատանքների բարձրակարգ որակավորում: Ծավել է Սևանի շրջանի Լճաշեն գյուղում, ավարտել է Երևանի Պելեական Համալսարանը, սննդ է աշխատանքի Գազի պելեական կոմբինատում՝ ինժեներ, ապա գլխավոր ինժեներ: 1984 թ.-ից աշխատում է Սևանի հացի գործարանի փոխնախագահ, այնուհետև՝ տնօրեն: Ընկերության աշխատանքներին՝ ձեռք բերված հաջողություններին, նորամուծություններին, լավաշի արտադրությունն աշխարհի բազմաթիվ երկրներում տարածման գործընթացների իրականացման մասին է պատմում Աշուր Ավերիսյանը:



Երկրներում կազմակերպելու ենք լավաշի արտադրություն: Որպես հոսքագծերի նախաձեռնող՝ ավելի լավ կկազմակերպենք լավաշի արտադրությունը:

Հայաստանում, ցորենի, հացի գներն ավելի ցածր են՝ համեմատած ցորեն արտադրող այլ երկրներում վաճառվող հացի գներից:

Կատարվել են ուսումնասիրություններ, մեր երկրում գները 30-ից 40 տոկոսով ցածր են: ՌԴ-ում, Ղազախստանում, Ուկրաինայում, վերջերս նաև՝ Լեհաստանում, հացի գները 30-40, նույնիսկ 50 տոկոսով ավելի են, քան՝ մեր հանրապետությունում առկա հացի գները: Մոսկվայում հացի արտադրությունում աշխատող բանվորի աշխատավարձը 30 000 ռուբլի է (300000դր.), մեր աշխատավարձերը ցածր են, դա է պատճառը, որ մեր հանրապետությունում հացի գինը՝ 1կգ-ը 350-380 դրամ է:

Առաջնային ինչպիսի խնդիր կա հացի արտադրության հետ կապված:

Հանրապետության հացի արտադրության շուկայում այսօր կան խնդիրներ, մրցակցությունը շատ մեծ է, որը խանգարում է ժողովրդի սոցիալական վիճակին: Կոնկրետ ՀՀ-ում հացի արտադրությունը հիմնականում կազմակերպվում է փոքր ծավալներով: Շուրջ 1000-ից ավելի հաց արտադրող կազմակերպություններ կան, որոնք չունեն խոշոր, իզուր կազմակերպությունների հնարավորությունները: Օրինակ, եթե Երևանում այսօր 10 հատ Սևանի հացի գործարանի նման գործարան լիներ, ապա հացի գինը կնվազեր ամենաքիչը 25%-ով: Ամենացավոտ կողմը հետադարձ հացն է, որ կոտրում է հացի գործարանի մեջքը, դա մեծ գումարային կորուստ է: Հացի արտադրած քանակի շուրջ 10-15 %-ը վերադարձ հաց է լինում, իսկ դա բնականաբար չի թույլատրվում վաճառել բնակչությանը: Այն մեծ ավստասներով վաճառվում է, որպես անասնակեր՝ մատչելի գնով: Հացը բարիք է, որի վրա մեծ աշխատանք է կատարվում մինչև հասնում է սպառողին, բայց, այնուամենայնիվ, օրական ունենում ենք 400-500 կգ հետադարձ

Պարոն Ավետիսյան, ինչպե՞ս որոշեցիք ընդլայնել Սևանի հացի գործարանի գործունեությունը:

Նախկինում՝ ԽՍՀՄ-ի տարիներին, գործարանը սպասարկում էր միայն Սևան քաղաքի ու հարակից գյուղերի բնակիչներին: Սեփականաշնորհումից հետո, միտք հղացավ ընդլայնել հացամատակարարումը հարակից քաղաքներում՝ Գավառում, Հրազդանում, գյուղերում, իսկ ամենամեծ արտադրությունն այսօր՝ Երևանում է, որտեղ ունենք շուրջ 18 արտադրամասեր: Բոլոր արտադրամասերի 335 աշխատակիցները, որոնց մեջ կան բարձրակարգ մասնագետներ, բնակչությանն ապահովում են թարմ ու համեղ հացերի լայն տեսականիով:

Հացի ու հացաբուլկեղենի քանի՞ տեսակա-նիստեր են արտադրվում:

Այս օրերին շուկայի պահանջարկը մեծ է, որովհետև մեր ազգը, մյուս ազգերի հետ համեմատած, ավելի շատ է հաց սպառում: արտադրում ենք շուրջ 60 հացատեսակներ, այդ թվում՝ նաև հայկական լավաշ: Թթխմորն արտադրվում է իմելային եղանակով: Տեսականիները ժամանակի ընթացքում զարգանում են, այսօր ամենամեծ ուշադրությունը կենտրոնացնում ենք լավաշի վրա, կարելի է ասել, արդեն իսկ համաշխարհային հաց է: Աշխարհի բոլոր ազգերը հետաքրքրված են մեր լավաշով:

Լավաշի արտադրությունը զարգացնելու համար ի՞նչ աշխատանքներ են իրականացվում:

Մեր հնարավորություններով ստեղծել ենք լավաշի հոսքագծերի արտադրություն, որն էլ նաև վաճառում ենք տարբեր երկրներում: Սևան քաղաքում գտնվող հոսքագծերի արտադրամասն արդեն համալրված է բարձրորակ մասնագետներով: Այդ հոսքագծերով կարողանում ենք ժողովրդի պահանջարկն իրականացնել բարձր մակարդակով: Կառ ապացույցն է մեր լավաշի վաճառքի կենտրոնում կուտակված հերթերը: Համագործակցում ենք «Երևան Սիթի» առևտրային կենտրոնի հետ: Մեր հոսքագծերն աշխատում են այնտեղ, և պահանջարկն օրեօր շատանում է: Լավաշի արտադրության 3 հոսքագծեր արդեն գործում են Կիև քաղաքում, վաճառել ենք նաև Մոսկվային, Բուլղարիային, Լիթվի Նովոգորոդին, մի քանի օրից էլ կուղարկենք նաև հեռավոր Կամբաոկա: Կհնում գործող լավաշի մեկ արտադրամասը մեր մասնաճյուղն է, շուտով մասնաճյուղեր կունենանք նաև Մոսկվայում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այնտեղ շահութաբերությունն ավելի բարձր է: Չգալով պահանջարկի առկայությունը՝ առաջիկայում աշխարհի տարբեր



հաց: Ունենք սուխարիների արտադրություն. որոշ քանակություն էլ վաճառվում: այսինքն հետադարձ հացի 90 %-ը վաճառվում է որպես անասնակեր:

Ցանկալի է, որ երկրի տնտեսական վիճակն ավելի զարգանա, որպեսզի ոչ միայն հաց արտադրողները, այլ նաև ոլորտների արտադրողները կարողանան իրենց վիճակը բարելավել: արդյունքում կշահի նաև բնակչությունը:

ՍԱՆՎԵԼ ԿԻՐԱՎՈՍՅԱՆ

ԽՃԱՆԿԱՐ

ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Անգամ Գերմանիայում, որտեղ գործում է գյուղատնտեսական մասնագետների պատրաստման և վերապատրաստման աշխարհում ամենաճանաչված համակարգերից մեկը, ժամանակ առ ժամանակ որոշ օղակներում կադրերի պակաս է զգացվում: Ինչպես ցույց են տալիս VDL գյուղատնտեսության ոլորտում մասնագետների միության հարցումները, մոտավոր 10 տարում 10 %-ով աճելու է ագրոարդյունաբերական համալիրի բարձրակարգ մասնագետների և ղեկավարների պահանջարկը:

Գյուղատնտեսությունը երկրում մշտապես պահանջված 25 մասնագիտությունների ցանկում է (չնայած՝ վերջին տեղերում): Բայց նկատվում է հետաքրքիր օրինաչափություն. չնայած վերջին 15 տարում ագրարային բուհերի ուսանողների թիվը կրկնապատկվել է, (մասնագիտությամբ աշխատանքի ընդունվածների թիվը վերջին 5 տարում նվազել է 11%-ով): Պատճառը քաղաքների գնալով ավելի գրավիչ լինելն է երիտասարդների համար և գյուղատնտեսությունում աշխատողների ավելի ցածր աշխատավարձերը այլ բնագավառների համեմատությամբ (ընդամենը 10-11 եվրո/ժամում): Այլ պատճառներից կարելի է նշել հանգստյան և տոն օրերի, անասնաբուծության ոլորտում, աշխատանքային լինելը և երկրագործության մեջ լարված աշխատանքը ցանքի, նաև բերքահավաքի ժամանակ:

Քանի որ բնագավառի ձեռնարկությունները չեն պատրաստվում իրենց պահանջների շեմն իջեցնել, փորձ է արվում ընդհանուր ուժերով կադրերի ներգրավման նոր ռազմավարություն մշակել. դրանց մեծամասնությունը օգտագործում է արտադրական պրակտիկան, բուհի հետ կապերի ամրացումը, ոչ լրիվ դրույքով աշխատանքը, ավարտելուց հետո՝ մասնագիտության վերապատրաստման ծրագրերը: Կան ձեռնարկություններ, որոնք սկսել են աշխատանք տանել բարձր դասարանների աշակերտների հետ: Կան խոշոր ընկերություններ, որոնք հիմնում են սեփական մասնագիտացված ակադեմիաներ. օրինակ՝ KWS-ն իր համար սելեկցիոներներ է պատրաստում:



Հասկանալի է, որ գյուղատնտեսության համար կադրերի պատրաստման խնդիրը բոլոր երկրներն են կարևորում և ըստ իրենց հնարավորությունների ու ազգային մտածելակերպի և առանձնահատկությունների՝ փորձում են դրանք լուծել: Այս առումով հետաքրքիր է, օրինակ, դիտարկել իրավիճակը ՌԴ-ում:

«Ռոստրոլ» գործակալության տվյալներով՝ 2015 թվականին ամենապահանջվածը երկրում եղել են ինժեներները, շինարարները և գյուղատնտեսության մի շարք մասնագետներ: Գործնականորեն բոլոր վարչական տարածքներում գյուղատնտեսության ոլորտի մասնագետների բազմաթիվ թափուր տեղեր կան, հատկապես Սանկտ-Պետերբուրգում և Լենինգրադի մարզում: Նախորդ տարվա պահանջն այս տարի աճել է 12 %-ով. հատկապես անհրաժեշտ են ագրոնոմներ, անասնաբույժներ, անասնաբույծներ: Թափուր են մնում գլխավոր ինժեներների, հերթափոխի պետերի, տեխնոլոգների, որակի մասնագետի պաշտոնները: Հրաշքացած չէ նաև հարևան մարզերում գյուղատնտեսության և անտառտնտեսության մասնագետների հաստիքների քառորդ մասը:

Հիմնական պատճառն այն է, որ երիտասարդ մասնագետները չեն ուզում գյուղ գնալ՝ ցածր աշխատավարձի, սեզոնային անհավասար ծանրաբեռնվածության, ինֆրակառուցվածքի բացակայության պատճառով: Մարզերում արդեն սկսել են հատուկ վերաբերմունք դրսևորել երիտասարդ կադրերի նկատմամբ՝ առաջին 3 տարվա ընթացքում աշխատավարձի մինչև 50 %-ի չափով հավելավճար տրամադրելով: Եթե պայմանագիրը կնքվում է 5 տարով, բացի ամենամսյա հավելավճարից տրվում է նաև միանվագ օգնություն՝ 150 հազար ռուբլի, օժանդակում են տուն գնելիս կամ կառուցելիս, սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման համար: Եվ սալը տեղից, կարծես, կամաց-կամաց շարժվում է:

Վ.Հ.

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԱԾԻԼՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄԸ

Որակյալ սածիլների աճեցումը՝ բարձր և ապրանքային բերքի ստացման կարևոր նախապայմանն է: Արարատյան դաշտի պայմաններում բանջարանոցային մշակաբույսերի սածիլներ կարելի է աճեցնել ջերմատանը, տաքացվող և արևային ջերմատներում, բաց գրունտի սածիլանոցներում,

ների/վրա, փայտե և պլաստմասե արկղներում, բաժակներում, տորֆային և տորֆահողային թաղարներում, պլաստմասե խոռոչիկներում, ջերմոցներում և բաց սածիլանոցներում: Աշխատելու հարմարավետության տեսակետից /ցանք, կտրուցում, փխրեցում, ջրում, պարարտացում և այլն/ պո-

զժերով, 5-7սմ միջարքային տարածությամբ և 1-1,5 սմ խորությամբ: Ցանքից առաջ սերմերը նախօրոք անհրաժեշտ է վարակազերծել և հարստացնել միկրոտարրերով: Չնայած աղային լուծույթում սերմերն ինչ-որ չափով վարակազերծվում են, այնու-



Պեղիտ Տորֆ Բիոհումուս, խարամ

հակ նախալեռնային և լեռնային շրջաններում՝ միայն տաքացվող պայմաններում: Որպես սուբստրատ՝ կարելի է օգտագործել տորֆի, փտած գոմաղբի, ճմախողի, բուսահողի, կենսահումուսի, ավազի, խարամի և պեղիտի տարբեր համակցություններ: Կարևոր է, որ այն լինի փխրուն,

լիթիլենային ծածկույթով ջերմոցների երկարությունը չպետք է գերազանցի 3, լայնությունը՝ 1 մետրը, իսկ բարձրությունը՝ 50-60 սմ-ը: Պոլիկարբոնատային և ապակե ծածկույթների դեպքում, ջերմոցի երկարությունը կարող է հասնել 5 մետրի:

հանդերձ, լիարժեք վարակազերծման համար դրանք թանգիֆի մեջ կապված 20 րոպե ընկղմվում են կալիումի պերմանգանատի 1%-ոց լուծույթի մեջ: Այնուհետև, երկարատև լվացումից հետո, փռվում են և



Պոլիէթիլենային թաղանթապատ ջերմոց

Երկու մետրանոց ջերմոց պատրաստելու համար հարկ կլինի օգտագործել 3, իսկ երեք մետրանոցի համար՝ 4 երկաթե կամար, որոնց ծայրերը պետք է մտցնել հողի մեջ՝ 20-30 սմ խորությամբ: Կամարները տեղադրվում են ջերմոցի սկզբում և վերջում, այնուհետև՝ յուրաքանչյուր մետրը մեկ: Որքան հաստ լինի պոլիէթիլենային թաղանթը, այնքան տաք կլինի ջերմոցը:



Պոլիկարբոնատային ծածկույթով ջերմատուն

ջրա- և օդաթափանցիկ, պարունակի բավարար սննդատարրեր: Տարածված սուբստրատներն են՝ տորֆի, ճմախողի և կենսահումուսի՝ 1 : 1 : 0,5 ; տորֆի, բուսահողի և ճմախողի՝ 3:1:1, տորֆի, ճմախողի և պեղիտի՝ 5:1:0,5, տորֆի, գոմաղբի և ավազի կամ խարամի՝ 3:1:0,5, ճմախողի, գոմաղբի, տորֆի և ավազի՝ 2:2:2:1, ճմախողի և տորֆի կամ գոմաղբի՝ 1:3 խառնուրդները:

Վարակիչ հիվանդություններից խուսափելու, ինչպես նաև սննդատարրերով հարուստ հող ունենալու համար խորհուրդ է տրվում ամեն տարի հեռացնել ջերմոցի հողի վերին 10-15սմ շերտը, տեղը լրացնելով նոր հողախառնուրդով: Ծայրահեղ դեպքում հարկ կլինի ջերմոցը թարմացնել նոր բուսահողով կամ տորֆով և ախտահանել:

չորացվում: Գոյություն ունեն նաև սերմերի նախացանցային այլ մշակումներ, որոնք բարձրացնում են ծյունակությունը, ցրտադիմացկունությունը և պտղաբերությունը, արագացնում բույսերի զարգացման ընթացքը: Դրանցից ամենակարևորներն են՝ սերմերի սառեցումը, տաքացումը և փոփոխական ջերմաստիճանների ազդեցությամբ կոփումը:

Սեղ դույլ պատրաստի սուբստրատին կարելի է ավելացնել 20-25 գ ամոնիակային սելիտրա, 15-20 գ սուպերֆոսֆատ, 5-10 գ կալիումի սուլֆատ և 1 բաժակ մոխիր: Սուբստրատի ակտիվ թթվությունը՝ pH-ը պետք է լինի 6,5-7,0: Կտրականապես արգելվում է սուբստրատներում օգտագործել արդեն մշակության տակ դրված հող, քանի որ մեծանում է հիվանդությունների հարուցիչներով և վնասատուներով վարակման հավանականությունը: Այնուհանդերձ, եթե օգտագործվում է նման հող, ապա խորհուրդ է տրվում այն աշնանը ախտահանել և բարակ շերտով ենթարկել ցրտահարման:



Սերմերի ծլեցում

Սերմերի սառեցումն իրականացվում է հետևյալ կերպ՝ նախ սերմերը պետք է 10-12 ժամ պահել 18-20°-ի ջրում, այնուհետև 24 ժամ պահել 0-2° C-ի տակ: Այս եղանակի կիրառման դեպքում բարձրանում է ցրտադիմացկունությունը և արագանում պտղաբերությունը: Սերմերի տաքացումը նպաստում է դրմագգի մշակաբույսերի, այդ թվում նաև վարունգի իգական ծաղիկների շատացմանը, բերքատվության բարձրացմանը և վաղաժամ հասունացմանը: Այդ նպատակով սերմերը 3 ժամ պետք է պահել 50-55°-ի տակ, որից հետո ցանել:

Սածիլների աճեցման համար նպատակահարմար է նաև օգտագործել մասնագիտացված խանութներում այդ նպատակով վաճառվող սուբստրատները: Սածիլներ կարելի է աճեցնել դարակաշարերի /ստելած-

մոցում լցնել այնպես, որ հողի և ապակու միջև լինի 15-17սմ ազատ տարածություն: Ավելի մեծ տարածության դեպքում բույսերը կձգտեն դեպի լույսը, որի արդյունքում կստացվեն ձգված սածիլներ: Ցանքը պետք է կատարել լայնակի շարքերով: Լույսի սերմերի ցանքի համար խորհուրդ է տրվում օգտագործել մատավոր, քառակուսաբանային դաշեր /5x5 սմ/: Սերմնափոսիկի խորությունը պետք է լինի 1,5-2,0 սմ: Տաքեղի և բարդիջանի համար նպատակահարմար է գծավոր դաշերի օգտագործումը, որի դեպքում սերմերը ցանվում են զուգահեռ

Փոփոխական ջերմաստիճանի ազդեցությամբ, սերմերի կոփումն իրականացվում է հետևյալ կերպ՝ սերմերը տոպրակով 3-4 ժամ պետք է պահել թրջոցում, այնուհետև քամել և փռելով կտորի վրա՝ 12 ժամ պահել սենյակային ջերմաստիճանում /18-20°/: Որից հետո ևս 12 ժամ սերմերը հարկ է պահել 0-ից մինչև -2°-ում: Նման հաջողականությամբ

ԿՐԹԱԿԱՆ

ԵՐԲ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնը շարունակում է համալսարանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը: 2015 թվականի դեկտեմբերին ՏՏ և ԻԾ կենտրոնը, ռեկտորատի աջակցությամբ, շահել է ոլորտի համար շրջադարձային դրամաշնորհային ծրագիր:

«Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» ծրագրի հիմնական նպատակն է՝ ստեղծել գինեգործական կրթության համար նյութատեխնիկական բազա, միավորել մեկ միասնական համակարգի մեջ համալսարանին պատկանող տարբեր ստորաբաժանումների գիտական և նյութական ռեսուրսները՝ ապահովելով ՀՀ-ում մեծ պահանջարկ ունեցող «հմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտությամբ բարձր որակավորում ունեցող շրջանավարտների թողարկումը և գիտաարտադրական ոլորտում նորարարությունների խթանումը:

Գինեգործությունը Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ուղղություններից է, և ճյուղի համար անհրաժեշտ կադրերի ապահովումն իրականացնում է միայն ՀԱԱՀ-ը՝



միավորելով ՀԱԱՀ-ի կազմում գտնվող խաղողապտղագինեգործության և Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի երկու գիտական կենտրոնների, Բալախովիտի և Ոսկեհատի ուսումնասիրոճական տնտեսությունների գիտաշխատողների ներուժը և հումքային բազան: Ծրագրի շրջանակներում հնարավորություն կստեղծվի պատրաստել մրցունակ կադրեր, իրականացնել նորամուծական գիտական ծրագրեր, կրթական ծառայություններ մատուցել ոլորտի փոքր և միջին ձեռնարկությունների և այլ հաստատությունների համար:

Հիշեցնենք, որ 2013 թ. սեպտեմբերի 5-ին, ՆԱՀ-ի շրջանակներում, «Կրթական ծրագրերի» ԾԻԳ-ի և ՀԱԱՀ հիմնադրամի միջև դրամաշնորհային պայմանագրով ստեղծվել է ԱՀՈՒԱԿ-ը՝ ագրոպարենային ոլորտի կրթության և խորհրդատվության, ուսումնասիրոճական և գիտաարտադրական բազայի զարգացման նպատակներով:

2015 թ. -ի հուլիսին ծրագիրը հաջողությամբ ավարտվել է, և ստացված փորձը, որպես հաջողության գրավական, նպաստել է իրականացնել հաջորդ կարևոր նախաձեռնությունը: «Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ու Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի Նորարարությունների մրցակցային հիմնադրամի առաջին շրջափուլի շրջանակներում: Նորարարությունների մրցակցային հիմնադրամը բարձրագույն կրթության ոլորտում նորարարությունները խթանող մեխանիզմ է, որի միջոցով ՀՀ բուհերին, մրցակցային հիմունքներով, տրամադրվում են դրամաշնորհներ նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացման և բուհերի կարողությունների հզորացման նպատակով:

Չորս փուլից կազմված ծրագիրը մեկնարկել է 2015 թ. -ի դեկտեմբերին և կավարտվի 2017 թ. -ին:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԱԾԻԼՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄԸ

6

յամբ սերմերի կոփումը տևում է 10-12 օր, որի ամբողջ ժամանակահատվածում սերմերը պետք է միշտ խոնավ լինեն, իսկ դրանց ծկթելը ցանքի համար պատրաստ լինելու նշան է: Այս միջոցառումը նպաստում է բույսերի վաղ պտղակալմանը, անբարենպաստ պայմանների նկատմամբ դիմացկունության բարձրացմանը, բերքի ավելացմանը:

Ինչ վերաբերվում է սերմերի ծլեցմանը, ապա այն հիմնականում կիրառվում է խոշոր սերմերի համար (ձմերուկ, սեխ, վարունգ, լոբի, դդում, դդմիկ, բամբակ և այլն): Ծլեցման նպատակով սերմերը պետք է 4-6 ժամ թրջել ջրի մեջ, որից հետո հաստ շերտով փռել խոնավ քաթանի կամ թաղիքի վրա և ծածկելով խոնավ շորով՝ պահել 20-25°-ի տակ: Սկզբնական շրջանում սերմերը օրվա մեջ պետք է խառնել 2-3 անգամ և հետևել, որ կտորները միշտ լինեն խոնավ: Երբ սերմերը սկսում են ծկթել, ավելի լավ է դադարեցնել խառնելը, որպեսզի չվնասվեն ծիլերը: Երբ ծկթում է սերմերի 1/3-ը, անհրաժեշտ է ցանք կատարել:

Լուց հետո, պետք է հեռացնել պոլիէթիլենային թաղանթը և մինչև իսկական տերևների առաջացումը ջերմաստիճանը շուրջօրյա պահել 15-16°-ի սահմաններում: Առաջին իսկական տերևների ձևավորումից մինչև սածիլների օպտիմալ հասակի հասնելը, շրջապատի ջերմաստիճանը ցերեկը պետք է պահել 22-24° ՎՆ-ի, իսկ գիշերը՝ 12-14°-ի պայմաններում: Այս դեպքում բույսերը չեն ձգվում և ձևավորում են լավ արմատային համակարգ: Այդ ընթացքում աստիճանաբար կատարում են օդափոխանակություն և բույսերին ընտելացնում արևային ճառագայթմանը:

Շատ կարևոր է միջավայրում պահպանել օպտիմալ լուսավորություն: Որակյալ սածիլների ստացման համար անհրաժեշտ է, որ բույսերը օրը 12-14 ժամ գտնվեն 12000-15000 լյուքս լուսավորվածության պայմաններում: Բնական է, որ ձմռանն ու վաղ գարնանը, առանց արհեստական լուսավորվածության անհնար է ապահովել այդ պայմանները: Այդ նպատակով կարելի է օգտագործել նատրիումական

սելխորա, 15 գ կալիումի սուլֆատ և 40 գ սուլֆերֆոսֆատ: Կաղամբի համար այդ նյութերի հարաբերակցությունը պետք է լինի 20:10:30-40 գ: Մասնագիտացված խանութներում վաճառվում են հատով սածիլների սնուցման համար լուծվող պարարտանյութեր, որոնք իրենց բաղադրությունում, բացի ազոտից, ֆոսֆորից և կալիումից, ունեն նաև անհրաժեշտ միկրոտարրեր:

Սածիլների երկրորդ և երրորդ սնուցումները կատարվում են 10 օր ընդմիջումով՝ աստիճանաբար ավելացնելով նորմաները:

Շատ կարևոր է սածիլների ինամբին հետևելը: պետք է ժամանակին օդափոխել միջավայրը, բույսերը ջրել, սնուցել, փխրեցնել և կատարել նախազգուշական սրվումներ՝ հիվանդությունների զարգացումը կանխարգելելու համար: Սածիլները 2-3 անգամ պետք է սրվել պրեվիկուրի 0,15%-ոց, իսկ տնկելուց առաջ՝ ռիդոմիլի 0,2%-ոց լուծույթներով: Վիրուսային հիվանդությունների կանխարգելման համար շատ արդյունավետ է սածիլների կրկնակի ցողումը (10-15 օր ընդմիջումով) կաթնալոգային խտածոյով: Այդ նպատակով 9 մաս ջրին պետք է ավելացնել 1 մաս յուղազերծ կաթ և 1մլ դեղատնային յոդի լուծույթ:

Կարևոր է նաև վնասատուների ժամանակին հայտնաբերումը և պայքարի միջոցառումների կազմակերպումը:

Սածիլները պետք է ջրել առավոտյան, գոյ ջրով (25-30°): Շատ արդյունավետ է բույսերի պարբերաբար ջրումը կալիումի պրեմիսային և սոդիումի վարդագույն լուծույթով:

Խոռոչիկներում աճեցնելիս սածիլները վերատնկվում են առաջին իսկական տերևների ձևավորման սկզբում՝ 10x10x10 սմ-ոց բաժակների մեջ: Խորհուրդ է տրվում մշտական տեղ տեղափոխելուց առաջ սածիլները կոփել՝ աստիճանաբար հարմարեցնելով նոր պայմաններին: Տեղափոխելուց 10-12 օր առաջ պետք է սահմանափակել բույսերի ջրումը, իսկ մի քանի օր առաջ՝ լրիվ դադարեցնել: Այդ ընթացքում հարկ կլինի ուժեղացնել օդափոխանակությունը և երկարացնել արևահարման տևողությունը:

Խորհուրդ է տրվում սածիլների տնկումը կատարել ոչ արևային եղանակին:

Ճիշտ աճեցված և որակյալ սածիլները պետք է ունենան մուգ կանաչ գույնի 5-7 հատ լավ ձևավորված տերև՝ նստած 15-20 սմ երկարությամբ, 0,4-0,5 սմ հաստությամբ, կարճ միջհանգույցներ ունեցող ցողունի վրա:

Լևոն Աճեմյան

Կենսաբանական գիտությունների թեկնածու, Սպառողների ազգային ակադեմիայի գյուղերպարտամենտի ղեկավար

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
Գյուղատնտեսական համատարած հաշվառում. ուժեղ գյուղատնտեսությունը կառուցվում է ուժեղ թվերի վրա

2014թ. հոկտեմբերին Հայաստանում առաջին անգամ իրականացվեց Գյուղատնտեսական համատարած հաշվառում (ԳՀՀ): Այն համապետական համալիր միջոցառում է, որի ժամանակ գյուղմթերք արտադրող ֆիզիկական և իրավաբանական անձանցից հավաքվում են համընդգրկուն կառուցվածքային տեղեկություններ գյուղատնտեսության վերաբերյալ: ԳՀՀ-ն Հայաստանում անցկացվելու է 10 տարին մեկ անգամ: Իսկ առաջին ԳՀՀ-ն ներկայումս վերջնական տվյալների ամփոփման և դրանց հրապարակման նախապատրաստման փուլում է:

2015թ. նոյեմբերի 27-ին կազմակերպված աշխատաժողովի ժամանակ Ազգային վիճակագրական ծառայությունն (ԱՎԾ) առաջին անգամ տվյալների օգտատերերի ներկայացուցիչներին ներկայացրեց ԳՀՀ շրջանակում տվյալների մշակման և հրապարակման նախապատրաստական աշխատանքների ընթացիկ իրավիճակը, ինչպես նաև հրապարակեց որոշ նախնա-



կան տվյալներ: Հիմնական օգտատերերը կան, ինչպես վիճակագիրներն են ասում, սպառողները ներկայացվել էին բարձր մակարդակով՝ գյուղատնտեսության նախարարության վարչությունների պետերը՝ նախարարի տեղակալ Գառնիկ Պետրոսյանի գլխավորությամբ, ԱՎԾ մարզային գործակալությունները, ՄԱԿ-ի ՊԳԿ-ն, Ավստրիական զարգացման գործակալությունը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, Հայաստանում ԵՄ պատվիրակությունը, ԵՄ Թվինինգ նախագիծը, ԱՄՆ ՄՀԳ-ն, ՀԲ-ն, Դանիայի վիճակագրական ծառայությունը, ԲՒԱԴ-ը, Ազդրիգնեպի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնը (ICARE): ԳՀՀ կարևորության և հիմնական խնդիրների մասին ԱՎԾ նախագահ Ստեփան Մեսգակչյանի զեկույցին հետևեցին տվյալների մշակման ընթացիկ իրավիճակին, ցուցանիշների ձևաչափին, տվյալների որակի վերահսկման ծրագրակազմերին և տվյալների հրապարակման և տարածման եղանակներին նվիրված՝ ԱՎԾ պատասխանատուների և միջազգային փորձագետների զեկույցները:

ԳՀՀ վերջնական տվյալները նախատեսված է հրապարակել 2016թ. վերջին: Աշխատաժողովի ժամանակ հրապարակվեցին միայն որոշ նախնական տվյալներ անասնազվաքանակի վերաբերյալ: Հրապարակված տվյալներն էլ բավական են եզրակացնելու համար, որ հայաստանյան առաջին ԳՀՀ-ն միանշանակորեն ապահովելու է աննախադեպ համակողմանի և առավել օբյեկտիվ տվյալներ՝ ավելի քան 405,5 հազ տնային տնտեսությունների շրջանում անցկացված հաշվառման հիման վրա:

Ընդհանուր առմամբ, ԳՀՀ նախապատրաստման, անցկացման և հետահաշվային ստուգումների աշխատանքները ցույց տվեցին, որ նոր հեռանկարներ են բացվում գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների թիվ մեկ սպառողի՝ գյուղատնտեսության նախարարության և ԱՎԾ-ի հետագա փոխգործակցության համար. ուժեղ գյուղատնտեսությունը կառուցվում է ուժեղ թվերի վրա: Առաջիկայում ակնկալվում են նախարարության կարծիքը և առաջարկությունները, մասնավորապես, ելքային աղյուսակների ձևաչափի և կառուցվածքի հնարավոր բարելավման հարցում:

Աշխատաժողովը վկայեց, որ միանգամայն իրատեսական են միջազգային դոնորների, տեղական և միջազգային այլ գործընկերների և գյուղատնտեսական լայն հանրության ակնկալիքները ԳՀՀ-ից: Պարզ է՝ ԳՀՀ վերջնական արդյունքները լինելու են ավելի արժանահավատ, քան գյուղատնտեսական վիճակագրությունը կարողացել է ապահովել մինչ այսօր:

ԱՀԿԿԿ հիմնադրամը, որպես գյուղատնտեսական վիճակագրության տվյալների ակտիվ սպառող, ուրախությամբ գործակցում է ԱՎԾ-ի և վերջինիս ԳՀՀ վարչության հետ, ինչպես նաև կազմակերպական բնույթի աջակցություն ցուցաբերում ԱՄՆ գյուղերպարտամենտի Գյուղատնտեսական վիճակագրության ազգային ծառայության փորձագետ, հայաստանյան ԳՀՀ-ի երախտավոր Մայքլ Ստայնբերին:

Սոս Ավերիայան

ԱՀԿԿԿ (ICARE) հիմնադրամի հանրային կապերի մասնագետ



Սածիլի աճեցումը տորֆաբուսահողային խոռոչիկներում

ՀԵՏԱԲՈՒՄ Է...

ԵՐԿՆՔԻ ԾԱՂԻԿ՝ ՈՒԴՈՒՄԲԱՐԱ

Ուղումբարա անվանումը ծագում է ասնակրիպական բառից և նշանակում է «ծաղիկ երկնքից»: Լեզենդի համաձայն այն մեծ խնամքով կամ լուսավորչի գաղտարն է նախանշում: Այս անուշահոտ փոքրիկ ծաղիկը շարքաբարակ և միևնույն ժամանակ ամուր ցողուն ունի:



Առաջին անգամ ուղումբարան, որպես երկնային ծաղիկ տեսել է մի պապիկ, ով ապրել է Շանհայ քաղաքում: Պապիկն ունեցել է շատ պողպատե խողովակներ, որոնք ժամանակ առ ժամանակ մաքրում էր: Մի անգամ մաքրելիս, պապիկի ձեռքը դիպչում է ինչ-որ փափուկ մի հատվածի: Ծերունին, ձեռք տալով, տեսնում է ցողուններ՝ ծայրերին սպիտակ բարակ ծաղիկներ, (38 հատիկ) է: Դրանք ավելի բարակ էին, քան մարդու մազերը: Յուրաքանչյուր ծաղիկի տրամագիծը 1մմ: Հետևելով ծաղիկներին՝ տեսել է, որ դրանք բացվում են առավոտները և փակվում են երեկոյան: Այն աճել է խողովակի մեջ առանց ջրի ու առանց հողի: Ծաղիկների ի հայտ գալու հետ մեկտեղ, ձերուուն սկսում են ուղեկցել հաջողությունն ու երջանկությունը: Հազվագյուտ բույսը սկզբում անվանել են մամուռ, որովհետև աշխարհում դեռևս չի եղել ոչ մի ծաղիկ կամ բույս, որ աճի առանց ջրի ու հողի. հետագայում պարզ է դարձել, որ այն ուղումբարան է:

մանր ծաղիկներ էին աճել, որոնցից յուրաքանչյուրը 1 սմ, երկարությամբ: Տեղեկանալով այս մասին՝ ավելի քան 7 հազար բնակիչ այցելեց տաճար, այդ հրաշքին ականատես լինելու նպատակով: Իսկ դա հասկանալի է, քանի որ ուղումբարան ոչ հաճախ է ծաղկում:

2010 թ.-ին չինական ՋԼՄ-ները հայտնեցին ծաղիկի հայտնվելու մասին՝ անվանելով այն երկնային: Իսկ դա բավական անսովոր է չինական ՋԼՄ-ների համար, քանի որ չինական կոմունիստական ռեժիմը պաշտոնապես հավատարիմ է արեթիվի տեսությանը և հազիվ թե հավատար երկիր մեծ հոգևոր առաջնորդի գալստին: Այդ թեմայի վերաբերյալ պետական ՋԼՄ-ներում բոլոր հոդվածներն հրապարակումից հետո ամբողջովին վերացվեցին, սակայն դրանք հասցրել էին տարածվել համացանցում: Բուդդայական լեգենդի համաձայն՝ ուղումբարան ազդարարում է Սուրբ արքայի գալուստը, որը պատում է անիվը: Նա կընդունի ցանկացած կրոնական պատկանելության մարդու՝ գթասրտությամբ փրկություն առաջարկելով բոլորին: Ուղումբարա ծաղիկը գերբնական ուժերի ծնունդ է խորհրդանշում, այն երկնային ծաղիկ է և գոյություն չունի երկրային կյանքում: Իսկ երբ Ոսկե անիվով թագավորը ժամանի մարդկային աշխարհ, նրա մեծ առաքինության և օրհնության շնորհիվ, ուղումբարա ծաղիկը կրկին կծաղկի:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

ՎԻՏԱՄԻՆՆԵՐԻ ԶՄԵՌԱՅԻՆ ՊԱՇԱՐ

Ձմռանը մարդկային օրգանիզմն առանձնահատուկ խոցելի է դառնում: Բավական քանակությամբ թարմ մրգերի և բանջարեղենի բացակայության արդյունքում, դիմադրողականությունն ընկնում է, և մարդը դժվարանում է պայքարել վիրուսների դեմ: Ի ուրախություն մեզ, շուկաներում և խանութներում վաճառվում են այնպիսի վիտամինի պաշարներ, որոնք չեն աճում մեր երկրում՝ մանդարին, նարինջ, կիվի, խուրմա:

Պետք է մոռանալ նաև հայրենի մրգի՝ խնձորի մասին, որը հարուստ է A, C, B1, B2, B6, P, E վիտամիններով: Մրգերի թվում էլ կան առաջատարներ, որոնք տարվա այս ժամանակահատվածում հագեցած են կենսաբանորեն ակտիվ տարրերով:

Օրինակ՝ մանդարինը, որը ընդունված է Նոր տարվա առիթով ուտել մեծ քանակությամբ, պարունակում է պեկտիններ, երկաթ, աղեր և կալցիում, ինչպես նաև B, C և P խմբի վիտամիններ: Այդ մրգի բույրը դրական է ազդում մեր տրամադրության վրա, նվազեցնում է նյարդային լարվածությունը և ազատում անքնությունից: Եթե մանդարինի կեղևների բույրը տարածվի ննջասենյակում, ապա ավելի արագ և ավելի ամուր կքնեք: Բացի այդ, մանդարինը կարող է բուժել հազը և հիվանդ կոկորդը, քանի որ այն հայտնի է իր հակաբակտերիալ հատկություններով:



րով: Այս միզն օգտակար է սրտխփոցի և արյան բարձր ճնշման դեպքում:

Կիտրոնը, թթվության հետ մեկտեղ, շատ օգտակար է: Այն բարձրացնում է դիմադրողականությունը և կարգավորում է մարսողական գործընթացները: Կիտրոնի հյութի օգնությամբ դուք կկարողանաք օրգանիզմից դուրս բերել տոքսինները: Հիպերտոնիկ հիվանդության սկզբնական շրջանում շատ օգտակար է այս մրգի փափուկ զանգվածը: Իսկ գրիպի և մրսածության հետևանքով առաջացած այլ հիվանդությունների կանխարգելիչ բուժման համար շատ օգտակար է այսի վրա դրված մի կտոր կիտրոնը:

Նարինջը պարունակում է կալցիում, կարոտին, կալիում, ֆոսֆոր և մի շարք վիտամիններ, որոնք պակասը մեքեզ գում ենք ձմռանը: Նրա հոտը հանգստացնում է: Դրա համար նշված մրգով բուժում են վախը, նկրոզը, գլխացավերը և անհանգստությունը: Այս միզն հիանալի կերպով օրգանիզմից դուրս է բերում տոքսինները, ինչպես նաև վերացնում է ալկոհոլային թունավորման հետևանքները: Եթե շերտները բարձր է, ապա նարինջի եփուկի օգտագործումը կարող է այն իջեցնել: Այդ եփուկի պատրաստման համար հարկավոր է մի քանի կտոր մրգի վրա լցնել եռացած ջուր և թողնել մի որոշ ժամանակ թրմվի:

Եթե դուք նախընտրում եք օգտագործել յուրյոտ սնունդ, ապա նրա յուրացման համար կարելի է ուտել մի քանի կտոր նարինջ:

Թուրինջը հարուստ է վիտամին C-ով: Այն իր բաղադրության մեջ պարունակում է մի նյութ, որը համարվում է բարեկազմության վիտամին: Այս միզն կարող է շատ օգտակար լինել այն մարդկանց համար, ովքեր կիրառում են զանազան դիետաներ: Այն բարձրացնում է օրգանիզմի ընդհանուր տոնուսը, հաղորդում է ուժ և նվազեցնում է արյան մեջ շաքարի մակարդակը:

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարանն ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 23 14 30 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկի-նիստ» գրատներում:



Advertisement for the 2016 subscription rates for 'AGRON' magazine. It lists rates for 1, 6, and 12 issues for different categories of subscribers. It also mentions that the magazine is published by the Agricultural Science Center of the Republic of Armenia and is available in various regional centers.